ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ ԿԳՄՍՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Վարդենիս

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հասմիկ Բեյբության

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Արարատ Ղազարյան

ԴՊՐՈՑ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Արփունիքի միջնակարգ դպրոց

Վարդենիս- 2022

Բովանդակություն

1.Ներածություն.....3

2.Գրական ակնարկ.....5

3.Փորձարարական հետազոտություն.....9

3.1.Խմբի նկարագիրը.....9

3.2.Փորձարարական դասեր.....13

3.2.1.Փորձարարական դաս-1.....13

3.3.2.Փորձարարական դաս-2.....14

4.Վերլուծություն.....15

5.Գրականության ցանկ.....17

6.Հավելված.....18

1.Դասապլան1.....18

2.Դասապլան2.....23

Ներածություն

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ընբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն

անհրաժեշտ է անձի հերդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակի ոչ մանկավարժական մոտեցում խնդրին: Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր հերառված համախմբերի հերդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստուգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնք թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է պատմության դերը:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն:

2.Գրական ակնարկ

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «...Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից» :

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքային է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի

որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է» :

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն:

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքի՝ հայրենասիրության զգացումը դաստիարակելու համար Հայոց պատմության դասընթացը բազմաթիվ հիանալի հնարավորություններ է ընձեռում: Պատմական հերոսների, նրանց գործողությունների, անձնազոհության ու հայրենանվիրության բացահայտումներով: Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Ի դեպ, յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով

է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար: Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են:

Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում: Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: «Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը» : Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

3.Փորձարարական հետազոտություն

3.1.Խմբի նկարագիրը՝

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը Հայոց պատմություն առարկայի դասավանդման ընթացքում համագործակցային մեթոդի կիրառմամբ նախագծված հետազոտական աշխատանքը իրագործելու նպատակով ընտրել եմ որպես փորձարարական դասարան ՀՀ Գեղարքունիքի մարզի Արփունիքի միջնակարգ դպրոց 9-րդ դասարանը՝

- հետազոտվող դասարանում աշակերտներների թիվն էր 26 աշակերտ՝14 աղջիկ, 12 տղա,
- աշակերտներն ունեին առաջադիմության ու զարգացման մոտավորապես միևնույն մակարդակը,
- հետազոտելի դասարանում ուսուցումն իրականացրել եմ Համագործակցային մեթոդի կիրառմամբ:

Հետազոտության շրջանակներում փորձարարական դասարանում ընտրվել են՝

- Հայոց պատմության դասագրքի երկու թեմաներ: Գիտափորձի իրականացման համար կիրառման մեջ են դրվել իմ կողմից նախապես մշակված դասերի պլանները,
- հետազոտության համար հիմք է ընդունվել « Հանրակրթության պետական չափորոշիչը,
- հետազոտվող դասարաններում մանկավարժական հետազոտության արդյունքները չափվել են իմ կողմից մշակված հարցաշար-քարտերի վերլուծության հիման վրա:

Դպրոցի հետազոտելի 9-րդ դասարանում, ուր նպատակ եմ հետապնդում զարգացնել սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը Հայոց պատմություն առարկայի դասավանդման ընթացքում համագործակցային մեթոդի կիրառմամբ, որպես ռազմավարական գործիք: Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է: Այն ենթանդրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ: Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը: Համագործակցային մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ.դրանք պետք է ուղղված լինեն սովորողների ինչպես մտավոր ու զգայական կարողությունների, այնպես էլ ինքնուրույնության, սոցիալականացման և այլ հմտությունների զարգացմանը: Մեթոդի ընտրության վրա կարող են ազդել՝

ուսուցման նպատակները և խնդիրները,

նյութի բովանդակությունը,

ուսումնական նյութի ծավալը և բարդությունը,

նոր գիտելիք ձեռք բերելու նկատմամբ աշակերտների շահագրգռվածությունը և համագործակցային հմտությունների մակարդակը,

աշակերտների տարիքային առանձնահատկությունները,

ուսումնական ժամանակը,

ուսուցման նյութատեխնիկական պայմանները,

ուսուցիչ -աշակերտ փոխհարաբերությունները,

աշակերտների թվաքանակը դասարանում,

ուսուցչի պատրաստվածության մակարդակը և այլն:

Համագործակցային ուսուցման արդյունավետության համար շատ կարևոր է ուսուցչի դասի պլանավորման նախապատրաստական աշխատանքների գրագետ կազմակերպումը: Այն ուսուցչից պահանջում է՝

հիմնավորել տվյալ դասը համագործակցային խմբերով կազմակերպելու անհրաժեշտությունը,

որոշել համապատասխան խմբեր կազմելու սկզբունքները, ձևերը,

նախապատրաստել անհրաժեշտ բաշխիչ նյութեր,

ձևակերպել նպատակներին համապատասխան առաջադրանքներ,

ձևակերպել առաջադրանքների կատարման հստակ հրահանգներ,

որոշել հանձնարարությունների համապատասխան ծավալ:

Դասի կազմակերպման ժամանակ ուսուցչի հիմնական աշխատանքը կլինի բոլոր խմբերի աշխատանքների վերահսկումն ու ուղղորդումը: Յուրաքանչյուր մեթոդի կիրառման նպատակները խիստ բազմազան են, ինչը ենթադրում է նաև, նպատակից կախված, մեթոդի ձևափոխման հնարավորություն: Ցանկացած դաս և դասարան եզակի է, ուստի ուսուցչի վարպետության ցուցանիշներից մեկը նպատակին համապատասխան մեթոդի ընտրությունն է :

Համագործակցային մեթոդները մեծ ներուժ ունեն աշակերտակենտրոն ուսուցում կազմակերպելու համար, ինչը ևս կրթական բարեփոխումների կարևոր պահանջներից է : Նշենք նաև, որ ժամանակակից կրթական գործընթացում կարևորվում է ոչ թե պատրաստի գիտելիքի մատուցումն ուսուցչի կողմից, այլ աշակերտին մասնակից դարձնելը այդ գիտելիքի ձեռքբերմանը: Համագործակցային մեթոդները թույլ են տալիս առավել արդյունավետ յուրացնել նոր նյութը, զարգացնել ինքնուրույնության, համագործակցային, հետազոտական աշխատանք կատարելու բազում հմտություններ, օրինակ՝ տեղեկույթի որոնման, հավաքման, մշակման և այլն: Սակայն այդ հմտությունների ձեռքբերումը սովորողների կողմից երկարատև աշխատանքի արդյունք է, իսկ ուսուցչին հնարավորություն է տալիս կատարելագործել, հարստացնել իր մեթոդական մոտեցումները տարբեր խնդիրների լուծման ժամանակ: Այսօր մանկավարժների մեթոդական զինանոցը բավականին հարուստ է, սակայն բոլորովին այլ է դրանց կիրառությունը: ՈՒսուցիչների կողմից հաճախ կիրառվում են բազում մեթոդներ, սակայն դրանք գրեթե միշտ կա՛մ չեն հասնում տրամաբանական ավարտին՝ դասի նպատակին, կա՛մ էլ ժամանակի մեջ չեն տեղավորվում, խմբերը համասեռ չեն կազմվում, խմբերում թիմային աշխատանքը չի ստացվում, ոչ բոլորն են ակտիվություն ցուցաբերում, անհրաժեշտ պահանջները կա՛մ չեն հասկանում, կա՛մ էլ թերի են կատարում: Ցանկացած նոր աշխատանք կատարելիս կարող են բացահայտվել բազում թերություններ, որոնք շտկվում, ճշգրտվում են աշխատանքի բազմակի կրկնության արդյունքում:

Հետազոտության մեթոդիկայի աշխատանքը շատերին հայտնի մեթոդի կիրառման մի առաջարկ է՝ ուսուցիչների մեթոդական մոտեցումները հարստացնելու նպատակով: Կիրառելի է ընկալման փուլում օգտագործվող «Աշակերտների թիմային առաջադիմություն», «Խճանկար», «Շրջյցի », «Մտագրոհ» աղյուսակի մեթոդները: Մեթոդի կիրառման հնարավորություն՝ որպես տեքստի ընկալման, վերլուծության, գլխավորը երկրորդականից տարբերելու, սեփական կարծիքը հիմնավորելու, ընդհանրացման,

համագործակցային հմտությունների զարգացման արդյունավետ ձև: Մեթոդը նպատակահարմար է կիրառել այն թեմաների դասավանդման ժամանակ, որոնք բավականին ծավալուն են: Բնականաբար առաջին անգամ մեթոդը կիրառելիս չեն կարող թերություններ չլինել, ուստի որոշակի հաջողություն գրանցելուց հետո մեթոդի կիրառումը և աշակերտների կողմից այն օգտագործելու արյունավետությունը բարձրացնելու համար ցանկալի է և օգտակար դրա բազմակի կիրառությունը: Հետազոտության ընթացքում հատուկ ուշադրության կենտրոնում եմ պահելու 4 աշակերտների, որոնք իմ կարծիքով ավելի կաշկանդված են և դժվարությամբ են մասնակցում բանավեճերին ու քննարկումներին: Նպատակն է նաև փորձարարական դասերի արդյունքում ակտիվացնել այս աշակերտներին , որպեսզի դասերին ավելի ակտիվորեն մասնակցեն:

3.2.Փորձարարական դաս-1

Այսօրվա դասն էր << Համազգային շարժման վերելքն ու զինված պայքարի սկիզբը>> թեման (տե՛ս դասապլան-1 էջ՝ 14): Դասաժամն սկսվեց տնային աշխատանքի ստուգումով. բոլորը ներկայացրին իրենց տնային աշխատանքները որոշակի սխալներով: Քննարկվեց տնային աշխատանքի սխալները , տրվեց բանավոր հետադարձ կապ: Այնուհետև դասարանը տարասեռության սկզբունքով բաժանեցի չորս խմբերի: Խմբերից յուրաքանչյուրը ստանում է մեկ թեմա, և պետք է դրա վերաբերյալ ներկայացնի իր ունեցած գիտելիքները, աշխարհագրական ներքին և արտաքին իրադարձությունների համատեքստում,

նախ թղթի վրա , հետո ներկայացնել բանավոր: Նախանշված ժամանակի ավարտից հետո խմբերը հերթով ներկայացնում են իրենց թեման, իրենց խմբի եզրակացությունը գրելով գրատախտակին: Բոլոր խմբերի ներկայացնելուց հետո համեմատականներ են տարվում այս չորս իրադարձությունների միջև, կատարվում է եզրակացություն: Ամբողջ դասի ընթացքում շեշտը դրվում է հերոսական կերպարների ու դրվագների վրա, վեր է հանվում ազգի և ժողովրդի լավագույն, վեհ կողմերի վրա, ուսուցանվում է, որպես օրինակ: Իմ նախանշած չորս աշակերտներից յուրաքանչյուրը ընդգրկված են խմբերից մեկում և աշխատում են համագործակցային ուսումնառության պայմաններում:

3.2.Փորձարարական դաս-1

Այսօրվա դասն էր << Հայաստանի անկախության գործընթացը >> թեման (տե՛ս դասապլան-1 էջ՝ 19): Դասաժամն սկսվեց տնային աշխատանքի ստուգումով, բոլորը ներկայացրին իրենց տնային աշխատանքները որոշակի սխալներով: Քննարկվեց տնային աշխատանքի սխալները , տրվեց բանավոր հետադարձ կապ: Այնուհետև դասարանը տարասեռության սկզբունքով բաժանում է երկու խմբերի: Խմբերից յուրաքանչյուրը ստանում է մեկ թեմա, և պետք է դրա վերաբերյալ ներկայացնի իր ունեցած գիտելիքները, աշխարհագրական ներքին և արտաքին իրադարձությունների համատեքստում: Նախանշված ժամանակի ավարտից հետո խմբերը հերթով ներկայացնում են իրենց թեման, իրենց խմբի եզրակացությունը գրելով գրատախտակին: Բոլոր խմբերի ներկայացնելուց հետո համեմատականներ են տարվում այս երկու իրադարձությունների միջև: Ամբողջ դասի ընթացքում շեշտը դրվում է հերոսական կերպարների ու դրվագների վրա, վեր է հանվում ազգի և ժողովրդի լավագույն, վեհ կողմերի վրա, ուսուցանվում է, որպես օրինակ: Իմ նախանշած չորս աշակերտներից յուրաքանչյուրը ընդգրկված են խմբերից մեկում և աշխատում

են համագործակցային ուսումնառության պայմաններում: Ցուրաքանչյուր աշակերտ պարտադիր արտահայտում է իր կարծիքը:

4. Վերլուծություն

Հետազոտությունը թույլ է տալիս հանգել հետևյալ այն եզրակացությանը, որ ուսուցման հանագործակցային մեթոդը նպաստում է ոչ միայն ուսման արդյունավետության բարձրացմանը, այլև զարգացնում է ստեղծագործական մտածողությունը, գիտելիքները դարձնում է կիրառելի և նպաստում ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու հարստացմանը:

Համագործակցային մեթոդի շնորհիվ աշակերտները՝

կարողանում են կատարել ուսումնական ստեղծագործական աշխատանք,

կարողանում են գտնել իրենց ստացած գիտելիքների և իրենց անձնական կենսափորձի միջև եղած փոխադարձ կապը, որպեսզի գիտելիքը գործնական կիրառություն գտնի,

դառնում են վերլուծություններ կատարող, հարց առաջադրող և պատասխանող,

դասարանում գլխավոր դերակատարողը դառնում է աշակերտը, գերակայում է աշակերտակենտրոն ուսուցումը,

սովորում է համագործակցել և աշխատել խմբում:

Այսպիսով հասարակական բուռն զարգացումները, ժամանակակից կրթական բարեփոխումները կյանքի են կոչել նոր՝ տնտեսական, գիտական, մշակութային և այլ պահանջներ, որոնք էլ պայմանավորել են մանկավարժական գործընթացի արմատական փոփոխությունները՝ ուսուցիչ–աշակերտ հարաբերություններից անցում դեպի ուսուցիչ–աշակերտ– աշակերտ հարաբերությունների ձևավորմանը: Ժամանակակից ուսուցման գործընթացում կրթության հիմնախնդիրների շարքում իր կարևոր տեղն ունի դասավանդման նոր մեթոդների և ձևերի, մանկավարժական նոր տեխնոլոգիաների որոնումն ու կիրառումը: Տեսական և փորձարարական աշխատանքների արդյունքում պարզ դարձավ, որ համագործակցային ուսուցման մեթոդը կարող է արդյունավետ կերպով կիրառվել ժամանակակից դպրոցի ուսուցման գործընթացում, որպես ստեղծագործական մտածողությունը զարգացնող միջոց: Փորձարարական հետազոտության արդյունքները վկայում են, որ համագործակցային մտածողության տեխնոլոգիայի մեթոդների ընտրությունն անմիջականորեն կապված է ուսուցանվող նյութի բովանդակության, բարդության և ծավալի հետ: Փորձարարական աշխատանքների արդյունքները փաստում են, որ համագործակցային ուսուցման մեթոդը նպաստում է ոչ միայն սովորողների ստեղծագործական մտածողության և նվազագույն գիտելիքի ձևավորմանն ու զարգացմանը, այլ նաև հանրակրթության պետական չափորոշչի մյուս բաղադրիչների՝ գիտելիքների համակարգի, հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական, ինքնուրույն գործունեության կարողությունների ու հմտությունների և սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը: Փորձարարական դասերը իմ նախանշած աշակերտների համար անցան շատ հետաքրքիր ու արդյունավետ, նախանշված աշակերտները ավելի մեծ ակտիվություն ցուցաբերեցին, քան սովորաբար և ավելի մեծ դրական արդյունքի հասան:

5.Գրականության ցանկ

1. Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ., 112 էջ:

2. Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986թ., 86 էջ:

3. Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ., 317 էջ:

4. Ա. Ե. Օլշանսկիկովա, Հույզեր և դաստիարակություն, Երևան, 1985թ., 84 էջ:

5. Педагогика, под. ред. Ю. К. Бабанского, С. Нойнера и др., М., 1978, 452 с.

6. Я. Корчак, Избранные педагогические произведения, М., 1979, 458 с.

6.Հավելված

Դասապլան-1

ՈՒսուցիչ ՝ Աբաբատ Ղազարյան

Առարկա՝	Հայոց պատմություն	Ամսաթիվ	27.01.2022	Կիսամյակ	II	Դասարան	IX
Թեմա՝	Համազգային շարժման վերելքն ու զինված պայքարի սկիզբը						
Օգտագործվող նյութեր՝	Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, Հայաստանի և Արցախի քարտեզ:						
Դասի նպատակը՝	Ակադեմիական՝ Աշակերտը, իմանա, որ՝ ● Աշակերտը, իմանա, որ՝ 1988թ. նոյեմբերի 24-ին Երևանում հաստատվեց պարետային ժամ, ● 1988թ. դեկտեմբերի 7-ին տեղի ունեցավ Սպիտակի երկրաշարժը, ● 1989թ. մայիսի 25-ին Մոսկվայում իր աշխատանքները սկսեց ժողովուրդների I համագումարը: Սոցիալական՝ ● 1988-91թթ.Ադրբեջանից բռնագաղթվել են 400 հազար հայեր, ● Մոսկվայում մշակվեց ‹‹Կոլցո›› ռազմական գործողությունը:						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						

Վերջնարդյունքները	Աշակերտը կարողանա՝ ● Գնահատել տվյալ պահի ռազմաքաղաքական իրողությունները, ● Բացահայտել ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարության դիրքորոշումը Հայաստանի ու Արցախի նկատմամբ, ● Կապեր գտնել Հայաստանի և մյուս երկրների տվյալ պահի դրության մեջ, ● Վերլուծել միջազգային մյուս երկրների քաղաքականությունը Հայաստանի նկատմամ ● Եզրակացության գալ ընդհանուր իրավիճակի մասին:

Գործողությունների (ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվողմեթոդ (ներ)
5րոպե-սկիզբ **10**րոպե-ընթացք	Աշակերտները դասարանը պատրաստում են խմբային աշխատանքի համար և սպասում են ուսուցչի հրահանգներին, Ներկայացնում են տնային աշխատանքները, Խմբերից յուրաքանչյուրը ստանում է մեկ թեմա, և պետք է դրա վերաբերյալ ներկայացնի իր ունեցած գիտելիքները, աշխարհաքաղաքական ներքին և արտաքին իրադարձությունների համատեքստում: Նախանշված ժամանակի ավարտից հետո խմբերը	Ողջունում է դասարանին, կատարում է ներկա բացակա, Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը, Աշակերտներին բաժանում է չորս խմբերի , բացատրում է աշխատանքի կանոնները և հանձնարարում էաշխատել: Խմբերից յուրաքանչյուրին տրվում է մեկ իրադարձություն՝ Սպիտակի երկրաշարժ, Արցախահայության բռնագաղթ, Գետաշենի և Մարտունաշենի հայաթափում, Կոլցո	*1.* Ե՞րբ է տեղի ունեցել Սպիտակի երկրաշարժը: *2.*Քանի՞ հայ է բռնագաղթել Ադրբեջանից: *3.*Ե՞րբ սկսվեց Ադրբեջանից օմոնականների հարձակումը: *4.*Ե՞րբ տարհանվեցին Մարտունաշենի և Գետաշենիբնակիչները: *5.*Ինչպիսի՞ն էր տվյալ պահին դրությունը Հայաստանում:	

15 րոպե	հերթով ներկայացնում են իրենց թեման, իրենց խմբի եզրակացությունը գրելով գրատախտակին: Բոլոր խմբերի ներկայացնելուց հետո համեմատականներ են տարվում այս չորս իրադարձությունների միջև, կատարվում է եզրակացություն:	օպերացիա, և հանձնարարում է այդ թեման ներկայացնել աշխարհաքաղաքական թե՛ ներքին, թե արտաքին համատեքստում: Խմբերում աշխատելու համար տրվում է **15** րոպե: ՈՒսուցիչը հերթով մոտենում է խմբերին, անհրաժեշտության դեպքում ցուցումներ է տալիս, կատարում է շտկումներ: Ամբողջ դասի ընթացքում շեշտը դրվում է հերոսական դրվագների և կերպարների վրա, վեր է հանվում ազգի ու ժողովրդի լավագույն կողմերը, ուսուցանվում է, որպես լավագույն օրինակ: Նոր թեմայի հաղորդում աշակերտների մասնակցությամբ		Հարցադրումների մեթոդ Համագործակցային ուսուցում Զրույցի մեթոդ Քարտեզագրման մեթոդ***T***
12րոպե				

Յրոպե		ՈՒսուցիչը կիրառում է << Մտքերի տարափ>> մեթոդը, որպեսի հասկանա, արդյո՞ք խմբերը լսում էին միմյանց և կարո՞ղ են պատասխանել նաև դասի մյուս հատվածներին վերաբերող հարցերին: ՈՒսուցիչը գնահատում է լավ և ակտիվ աշխատող խմբերի աշակերտներին և առանձին աշակերտների:		Հարց ու պատասխանի մեթո Մտքերի տարափ

Տնային աշխատանք	Դասը հանձնարարել պատմել, աշխատանքային տետրերում դուրս գրել ժամանակագրական և հետաբքիր փաստական տվյալներ:

Դասապլան-2

ՈՒսուցիչ՝ Արարատ Ղազարյան

Առարկա՝	Հայոց պատմություն	Ամսաթիվ	02.02.2022	Կիսամյակ	II	Դասարան	IX

Թեմա՝	Հայաստանի անկախության գործընթացը
Օգտագործվող նյութեր՝	Դրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, ՀԽՍՀ քաղաքական քարտեզ, ՀՀ քաղաքական քարտեզ:
Դասի նպատակը՝	Ակադեմիական՝ Աշակերտը, իմանա, որ՝ • Աշակերտը, իմանա, որ՝ 1990թ. մայիսի 20-ին անցկացվեց այլընտրանքային ընտրություններ, • 1990թ օգոստոսի 23-ին ԳԽ ընդունեց ‹‹Հռչակագիր ՀՀ անկախության մասին››, • ՀԽՍՀ-ն վերանվանվեց Հայաստանի հանրապետություն: Սոցիալական՝ • 1991թ. դեկտեմբերի 8-ին ԽՍՀՄ-ը փլուզվեց, • 1991թ. դեկտեմբերի 21-ին Ալմա Աթայում ստեղծվեց ԱՊՀ-ն:
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ
Վերջնարդյունքները	Աշակերտը կարողանա՝ • Գնահատել տվյալ պահի ռազմաքաղաքական իրողությունները, • Նկարագրել այդ պատմական պահը, • Կապեր գտնել Հայաստանի և մյուս երկրների մեջ, • Վերլուծել միութենական մյուս երկրների վիճակը տվյալ պահին , • Համեմատել նրանց վարած քաղաքականությունը , • Եզրակացության գալ ընդհանուր իրավիճակի մասին:

Գործողությունները(ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվողմեթոդ(ներ)
5րոպե-սկիզբ	Աշակերտները դասարանը պատրաստում են խմբային աշխատանքի համար և սպասում են ուսուցչի հրահանգներին, Ներկայացնում են տնային աշխատանքները,	Ողջունում է դասարանին, կատարում է ներկա բացակա, Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը,	1. Ե՞րբ անցկացվեցին այլընտրանքային ընտրություններ: 2.Ե՞րբ ընդունվեց անկախության մասին հռչակագիրը: 3. Ե՞րբ փլուզվեց ԽՍՀՄ-ը:	

10րոպե–ընթացք	Խմբերից յուրաքանչյուրը ստանում է մեկ թեմա, և պետք է դրա վերաբերյալ նախ թղթի վրա , այնուհետ բանավոր ներկայացնի իր ունեցած գիտելիքները, աշխարհագրական ներքին և արտաքին իրադարձությունների համատեքստում:	Աշակերտներին բաժանում է երկու խմբերի , բացատրում է աշխատանքի կանոնները և հանձնարարում էաշխատել: Խմբերից յուրաքանչյուրին տրվում է մեկ թեմա ՝ Հայաստանի անկախացումը հայերի տեսակետից և Հայաստանի անկախացումը Ռուսասատանի տեսակետից, հանձնարարում է այդ թեման ներկայացնել աշխարհագրական թե՛ ներքին, թե արտաքին համատեքստում: Խմբերում աշխատելու համար տրվում է **15** րոպե:	*4.Ո՞ր* երկրների մասնակցությամբ կազմավորվեց ԱՊՀ-ն: *5.* Ո՞ր պետությունները հռչակեցին իրենց անկախությունը;	
15 րոպե	Նախանշված ժամանակի ավարտից հետո խմբերը հերթով ներկայացնում են իրենց թեման, իրենց խմբի եզրակացությունը գրելով գրատախտակին: Բոլոր խմբերի ներկայացնելուց հետո համեմատականներ են տարվում այս տեսակետների միջև, կատարվում է եզրակացություն:	ՈԻսուցիչը հերթով մոտենում է խմբերին, անհրաժեշտության դեպքում ցուցումներ է տալիս, կատարում է շտկումներ: Ամբողջ դասի ընթացքում շեշտը դրվում է հերոսական		Հարցադրումների մեթոդ Համագործակցային ուսուցում

		դրվագների և կերպարների վրա, վեր է հանվում ազգի ու ժողովրդի լավագույն կողմերը, ուսուցանվում է, որպես լավագույն օրինակ:		Զրույցի մեթոդ
12բոպե		Նոր թեմայի հաղորդում աշակերտների մասնակցությամբ		Քարտեզագրման մեթոդ***T***
		ՈՒսուցիչը կիրառում է **‹‹** Մտագրոհ **››** մեթոդը, որպեսի հասկանա, արդյո՞ք խմբերը լսում էին միմյանց և կարո՞ղ են պատասխանել նաև դասի մյուս հատվածներին վերաբերող հարցերին: ՈՒսուցիչը գնահատում է լավ և ակտիվ աշխատող խմբերի աշակերտներին և առանձին աշակերտների:		Հարց ու պատասխանի մեթոդ Մտագրոհի մեթոդ

Յրոպե				
Տնային աշխատանք	Դասը հանձնարարել պատմել, աշխատանքային տետրերում դուրս գրել ժամանակագրական և հետաբրքիր փաստական տվյալներ:			